# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2026 թվականի թիվ 269-Ա

## «ԿՈՒՊՐԱՐ ՌԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԹԵՂՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2026 թվականի հուլիսի 7-ի նիստում, քննարկելով «Կուպրար ՌԱ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Կուպրար ՌԱ» ընկերություն**) և «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Թեղուտ» ընկերություն**) համակենտրոնացումը թույլատրելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

***1. <u>Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

«Կուպրար ՌԱ» ընկերությունը 2026 թվականի հունիսի 11-ին և «Թեղուտ» ընկերությունը 2026 թվականի հունիսի 12-ին դիմումներ են ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով թույլատրել հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը: Ներկայացված դիմումների համաձայն՝ «Կուպրար ՌԱ» ընկերությունը նախատեսում է ձեռք բերել «Թեղուտ» ընկերության կանոնադրական կապիտալի

փայաբաժինը:

«Կուպրար ՌԱ» և «Թեղուտ» ընկերությունների դիմումների հիման վրա օրենքով սահմանված կարգով հարուցվել է համակենտրոնացման գնահատման վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

***2. <u>Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվություն.</u>***

***1) «Կուպրար ՌԱ» փակ բաժնետիրական ընկերության մասով.***

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Կուպրար ՌԱ» ընկերությունը հիմնադրվել է 2026 թվականի փետրվարի 6-ին, հանդիսանում է

:

«Կուպրար ՌԱ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է « » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«**

**» ընկերություն**):

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝

:

« » ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս բաժնեմասը պատկանում է ֆիզիկական անձ :

« » ընկերության 2025 թվականի ֆինանսական տարվա ակտիվների արժեքը կազմել է

:

«Կուպրար ՌԱ» ընկերության ակտիվների արժեքը հայտարարագիր ներկայացնելու պահի դրությամբ կազմել է ՀՀ դրամ, հասույթի չափը՝ ՀՀ դրամ:

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝

:

***2) «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության մասով.***

«Թեղուտ» ընկերությունը գրանցվել է 2006 թվականի մայիսի 22-ին, իրականացնում է պղնձի հանքաքարի և խտահանքերի, մոլիբդենի խտանյութի արտադրություն և իրացում: «Թեղուտ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է

***«Թեղուտ» ընկերության մասնակցության շղթան.***

«Թեղուտ» ընկերության ակտիվների արժեքը 2025 թվականի վերջի դրությամբ կազմել է 97,366,219,000 ՀՀ դրամ, հասույթի չափը՝ 63,355,054,000 ՀՀ դրամ:

«Թեղուտ» ընկերության ակտիվների արժեքը 2026 թվականի մայիսի 31-ի դրությամբ կազմել է ՀՀ դրամ, սեփական կապիտալը ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները կազմել են ՀՀ դրամ:

:

«Թեղուտ» ընկերության կողմից 2025 թվականի ընթացքում արտադրված պղնձի հանքաքարերի և խտահանքերի ծավալը կազմել է չմտ, իսկ մոլիբդենի խտանյութի ծավալը՝ չմտ:

:

:

***3) Նախատեսվող գործարքի մասով.***

«Կուպրար ՌԱ» և «Թեղուտ» ընկերությունների կողմից ներկայացված դիմումների համաձայն՝ «Կուպրար ՌԱ» ընկերությունը նախատեսում է ձեռք բերել «Թեղուտ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը:

:

***«Թեղուտ» ընկերության մասնակցության շղթան Գործարքից հետո.***

2026 թվականի հուլիսի 2-ին «Կուպրար ՌԱ» ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Կուպրար ՌԱ» ընկերությունը «Թեղուտ» ընկերության բաժնետեր դառնալուն պես մտադիր է ապահովել «Թեղուտ» ընկերության կայուն և սոցիալապես պատասխանատու կառավարումը, մասնավորապես.

***4) Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության մասով.***

Հանձնաժողովի կողմից իրականացված հանքարդյունաբերության ոլորտի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ «Թեղուտ» ընկերության գործունեության մասով հարկ է նշել, որ ընկերությունը գրանցվել է 22.05.2006թ., սակայն հանքավայրի բուն շահագործումը մեկնարկել է 2015 թվականին, իրականացնում է պղնձի հանքաքարի և խտահանքերի, մոլիբդենի խտանյութի արտադրություն և իրացում: Հանքարդյունաբերության ոլորտի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում համախառն ավելացված արժեքի փոփոխության դինամիկան հիմնականում պայմանավորված է եղել Թեղուտի հանքավայրի շահագործմամբ և վերջինիս աշխատանքի դադարեցմամբ՝ նվազել է ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում: ԱՃԹՆ (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) հրապարակումներում (https://www.eiti.am/hy/) առկա տեղեկությունների համաձայն՝

– ՀՀ-ում 2022 թվականին պղնձի հանքաքարեր և խտահանքեր են արտադրել «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝

242 439 թմտ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 52 021 տոննա, «Թեղուտ» ընկերությունը՝ 23 159 չմտ և «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 8 415 թմտ: Մոլիբդենի խտանյութ են արտադրել «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 7 712 թմտ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 878 տոննա և «Թեղուտ» ընկերությունը՝ 232 չմտ:

– Ներքին շուկայում «Թեղուտ» ընկերությունը իրացրել է 9 901 չմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր և 392 չմտ մոլիբդենի խտանյութ, իսկ «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 280 թմտ մոլիբդենի խտանյութ:

– 2022 թվականին «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը արտահանել է 243 871 թմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր, 8 041 թմտ մոլիբդենի խտանյութ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը 52 189,2 տոննա պղնձի հանքաքարեր և խտահանքեր, 894,6 տոննա մոլիբդենի խտանյութ, «Թեղուտ» ընկերությունը 11744 չմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր, և «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 8 325 թմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր:

– Պղնձի հանքաքարեր և խտահանքեր 2023 թվականին արտադրել են՝ «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 201 332 թմտ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 51 892 տոննա, «Թեղուտ» ընկերությունը՝ 50 933 չմտ և «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 9 150 թմտ: Մոլիբդենի խտանյութ են արտադրել «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 10 550 թմտ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 1 269 տոննա և «Թեղուտ» ընկերությունը՝ 179 չմտ:

– Ներքին շուկայում «Թեղուտ» ընկերությունը իրացրել է 15 779 չմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր և 146 չմտ մոլիբդենի խտանյութ, «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 1 380 թմտ մոլիբդենի խտանյութ և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 711,1 տոննա մոլիբդենի խտանյութ:

– 2023 թվականին «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրկան ընկերությունը արտահանել է 203 367 թմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր, 8 042 թմտ մոլիբդենի խտանյութ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը 50 968,1 տոննա պղնձի հանքաքարեր և խտահանքեր, «Թեղուտ» ընկերությունը 38 617 չմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր, և «Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 9 150 թմտ պղնձի հանքաքարեր և խտահանքեր:

«Թեղուտ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում «Թեղուտ» ընկերության կողմից արտադրված պղնձի հանքաքարերի և խտահանքերի ծավալը կազմել է չմտ, իսկ մոլիբդենի խտանյութի ծավալը՝ չմտ:

:

***<u>3. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. «Կուպրար ՌԱ» ընկերությունը հիմնադրվել է 2026 թվականի փետրվարի 6-ին, հանդիսանում է :

2. «Կուպրար ՌԱ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է « » ընկերությանը:

3. « » ընկերությունը ( ) հիմնադրվել է 2025 թվականի օգոստոսի 14-ին, իրականացնում է :

4. « » ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է ֆիզիկական անձ :

5. « » ընկերության 2025 թվականի ֆինանսական տարվա ակտիվների արժեքը կազմել է

:

6.

:

7.

:

8. «Կուպրար ՌԱ» ընկերության ակտիվների արժեքը հայտարարագիր ներկայացնելու պահի դրությամբ կազմել է ՀՀ դրամ, հասույթի չափը՝ ՀՀ դրամ:

9.

:

10.

:

11.«Թեղուտ» ընկերությունը գրանցվել է 2006 թվականի մայիսի 22-ին, իրականացնում է պղնձի հանքաքարի և խտահանքերի, մոլիբդենի խտանյութի արտադրություն և իրացում:

12. «Թեղուտ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է

:

13. «Թեղուտ» ընկերության ակտիվների արժեքը 2025 թվականի վերջի դրությամբ կազմել է 97,366,219,000 ՀՀ դրամ, հասույթի չափը՝ 63,355,054,000 ՀՀ դրամ:

14. «Թեղուտ» ընկերության կողմից 2025 թվականի ընթացքում արտադրված պղնձի հանքաքարերի և խտահանքերի ծավալը կազմել է չմտ, իսկ մոլիբդենի խտանյութի ծավալը՝ չմտ:

15.

:

16.

:

17.

:

***<u>4. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>***

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են փայաբաժին ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը և այն տնտեսավարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժին է ձեռք բերվում:

Օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքի իմաստով համակենտրոնացումը կայացվում է՝

1) միևնույն ապրանքային շուկայում (հորիզոնական համակենտրոնացում),

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում (ուղղահայաց համակենտրոնացում), և

3) տարբեր ապրանքային շուկաներում (խառը համակենտրոնացում):

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված հասույթի չափը:

Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը, համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը սահմանելու և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 322-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 553-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Թիվ 553-Ն որոշում**) հավելված 1-ով սահմանվել են հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը: Մասնավորապես, Թիվ 553-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը:

Օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն արգելում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը, եթե՝

1) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով կանխվելու, սահմանափակվելու, արգելվելու կամ այլ կերպ վատթարանալու է տնտեսական մրցակցությունը համապատասխան ապրանքային շուկայում, կամ

2) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացումը հանգեցնելու է գերիշխող դիրքի առաջացմանը կամ ամրապնդմանը, կամ

3) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով վնասվելու են սպառողների շահերը, կամ

4) համակենտրոնացման մասնակիցը չի ներկայացնում համակենտրոնացման ազդեցությունը համապատասխան ապրանքային շուկայում գնահատելու համար

Հանձնաժողովի կողմից էական դիտարկվող տեղեկատվություն, և այդ տեղեկատվությունն այլ աղբյուրներից ստանալն անհնար է, կամ

5) համակենտրոնացման մասնակիցը ներկայացրել է համակենտրոնացման ազդեցությունը համապատասխան ապրանքային շուկայում գնահատելու համար Հանձնաժողովի կողմից էական դիտարկվող կեղծ տեղեկատվություն, ինչը բացասաբար է անդրադարձել Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրության ընթացքի և արդյունքների վրա:

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խառը համակենտրոնացումը և անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը թույլատրվում է պարզեցված ընթացակարգով, եթե առերևույթ բացակայում են համակենտրոնացումը արգելելու հիմքերը:

Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համակենտրոնացումն արգելելու հիմքեր առկա չլինելու դեպքում Հանձնաժողովը թույլատրում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ «Կուպրար ՌԱ» ընկերությունը հիմնադրվել է 2026 թվականի փետրվարի 6-ին և հանդիսանում է : «Կուպրար ՌԱ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է « » ընկերությանը:

« » ընկերությունը ( ) հիմնադրվել է 2025 թվականի օգոստոսի 14-ին, իրականացնում է : « » ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է ֆիզիկական անձ : Ֆիզիկական անձ հետ փոխկապակցված ընկերությունները գործում են :

«Թեղուտ» ընկերությունն իրականացնում է պղնձի հանքաքարի և խտահանքերի, մոլիբդենի խտանյութի արտադրություն և իրացում, կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժինը պատկանում է « » ընկերությանը ( ): Պղնձի հանքաքարերը և խտահանքերը 2025 թվականի ընթացքում արտահանվել է :

:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Կուպրար ՌԱ» ընկերության կողմից «Թեղուտ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժնի ձեռքբերման գործարքն Օրենքի իմաստով խառը համակենտրոնացում է, որը չի հանգեցնի տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ այլ կերպ վատթարացմանը, սպառողների շահերի վնասմանը, որպիսի պայմաններում համակենտրոնացումն արգելելու հիմքերը բացակայում են:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Կուպրար ՌԱ» ընկերության կողմից «Թեղուտ» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժնի ձեռքբերման միջոցով համակենտրոնացումը ենթակա է թույլատրման:

***5. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, 72-րդ հոդվածի 2-րդ մասով, 101-րդ հոդվածի 1-ին մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Թույլատրել «Կուպրար ՌԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս փայաբաժնի ձեռքբերման միջոցով «Կուպրար ՌԱ» փակ բաժնետիրական ընկերության և «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության համակենտրոնացումը:

2. Սույն որոշումը յուրաքանչյուր հասցեատիրոջ նկատմամբ իր մասով ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Կուպրար ՌԱ» փակ բաժնետիրական ընկերությանը և «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշման 1-ին կետը գործում է մեկ տարի ժամկետով:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

**ՆԱԽԱԳԱՀԻՆ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 7
Երևան